



## «ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2008

Հասցե՝  
Հեռախոս՝  
Ֆաքս՝  
Էլ. փոստ՝  
Ինտերնետային կայք՝

ՀՀ, 0010, ք. Երևան, Դեղատան փ. 2  
(37410) 58 02 62  
(37410) 54 54 77  
[info@tontoninvest.com](mailto:info@tontoninvest.com)  
[www.tontoninvest.com](http://www.tontoninvest.com)

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ</b>	<b>3</b>
<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b>	<b>3</b>
<b>ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>3</b>
<b>ՈՒՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ</b>	<b>4</b>
<b>ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>5</b>
<b>ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>9</b>
<b>ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>11</b>
<b>ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ</b>	<b>13</b>
<b>ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>14</b>
<b>ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ</b>	<b>15</b>
<b>ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ</b>	<b>16</b>

## **ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

2008թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը խորապես ազդեց միջազգային ֆինանսական շուկաների, ամբողջ աշխարհի բանկերի և ֆինանսական հաստատությունների գործունեության վրա: Սկսվեց ֆինանսական կազմակերպությունների լայնատարած սնանկացումների, ֆինանսական հաստատությունների կողմից վնասների բացահայտման, կլանումների և միավորումների, կառավարությունների միջամտության գործընթացը: Միջազգային կապիտալի շուկաներում դրամական միջոցների նվազումն ուղեկցվեց միջբանկային վարկի տոկոսադրույքների էական աճով: Չնայած կենտրոնական բանկերը միջամտեցին՝ իրացվելիություն ներարկելով ֆինանսական շուկաներ, այնուհանդերձ, դա զգալի ազդեցություն չունեցավ ֆինանսավորման պայմանների բարելավման վրա:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով հայկական բանկերի կողմից նկատվեց վարկերի տրամադրման պայմանների խստացում, որն արտահայտվեց հիմնականում տոկոսադրույքների աճով և վարկերի տրամադրման ընթացակարգերի ու գրավի նկատմամբ պահանջների խստացմամբ:

Ֆինանսական ճգնաժամի հետևանքով ֆինանսական կազմակերպությունների առջև ծառայած դժվարին պայմաններում «ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) փորձում է հաղթահարել ֆինանսական շուկայում ձևավորված անբարենպաստ գործոնների հետ կապված դժվարությունները:

Ընկերությունն իր գործունեության տասը տարիների ընթացքում ակտիվ դերակատարում է ունեցել ՀՀ արժեթղթերի շուկայում: Եվ այսօր ՀՀ արժեթղթերի շուկայում տեղի ունեցող արդի փոփոխությունները, մասնավորապես՝ NASDAQ OMX ընկերության մուտքը Հայաստանի արժեթղթերի շուկա, ինչպես նաև օրենսդրական դաշտում ակնկալվող փոփոխությունները նոր հնարավորություններ են ստեղծում Ընկերության գործունեության հետագա զարգացման համար:

### **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ընկերությունն ստեղծվել է 1999թ.: Այն գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրում 27.04.1999թ., գրանցման թիվ՝ 282.110.03586, վկայական՝ 02Ա - 045072, այնուհետև 2008թ. հունիսի 27-ին վերագրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում՝ արտոնագրվելով հետևյալ լիցենզիայով՝ ՆԸ թիվ 0007 - ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա, տրված 27/06/2008թ.: Ընկերությունն իր ստեղծման օրվանից ակտիվ դեր է կատարում Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայում:

Տասը տարի արդյունավետ գործունեություն ծավալելով արժեթղթերի շուկայում՝ Ընկերությունը վայելում է բարձր հեղինակություն հաճախորդների և գործընկերների կողմից, վստահություն է ներշնչում ֆինանսական հաստատություններին իր կողմից ցուցաբերած բարձր պրոֆեսիոնալիզմով: Դրա մասին են վկայում Ընկերության կողմից սպասարկվող հաճախորդների քանակի շարունակական ավելացումը, ֆինանսական հաստատությունների հետ ունեցած սերտ համագործակցությունը, ներդրումային շուկայում իրականացվող գործառնություններին ակտիվ մասնակցությունը և այդ գործառնությունների ծավալի շարունակական աճը:

Հանդիսանալով միակ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունը, որն ունի պետական պարտատոմսերի առաջնային շուկայում դիլերի կարգավիճակ՝ Ընկերությունը շարունակում է ակտիվ դերակատարություն ունենալ պետական պարտատոմսերի շուկայում: Նշենք նաև,

որ Ընկերությունն առաջինն է ստացել արժեթղթերի շուկայում պահառության գործունեություն իրականացնելու լիցենզիան:

2004թ.-ից Ընկերությունը միացած է ՍիԲիԷյՆԵթ միջբանկային համակարգչային ցանցին և անդամակցում է BankMail վճարահաշվարկային համակարգին: Ընդ որում, նշված համակարգերի շահագործման ողջ ժամանակահատվածում Ընկերության կողմից որևէ խափանման դեպք չի գրանցվել:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 412,000,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 412,000 բաժնեմասերի, և մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 1,000 ՀՀ դրամ:

2008թ. սեպտեմբերին Ընկերությունը հաջողությամբ թողարկեց և տեղաբաշխեց 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 12 ամիս մարման ժամկետով, տարեկան 11 % եկամտաբերությամբ, 250 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 5,000 հատ արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք ներկայումս ցուցակված են և շրջանառվում են «ՆԱՍԴԱԲ ՕԷՍԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի ազատ շուկա հարթակում: Հանդիսանալով հաշվետու թողարկող՝ Ընկերությունը պարտաճանաչ կերպով պարբերաբար տեղեկատվություն է հրապարակում իր գործունեությանը վերաբերող էական փաստերի վերաբերյալ: 2009թ. մարտին Ընկերությունն իրականացրեց իր պարտատոմսերի արժեկտրոնների առաջին վճարումը:

## **ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ**

Ինչպես բոլոր ֆինանսական կազմակերպությունները, Ընկերությունն իր գործունեության ընթացքում առնչվում է տարբեր ռիսկային գործոնների հետ:

Ստորև նշվում են Ընկերությանն առնչվող առավել կարևոր ռիսկերը.

Շուկայական ռիսկ: Երկրի տնտեսական պայմանների վատթարացումը կարող է բացասաբար ազդել Ընկերության շահութաբերության վրա: Այնպիսի գործոններ, ինչպիսիք են տոկոսադրույքները, ինֆլյացիան, իրացվելիությունը, արտարժույթի փոխարժեքը, կարող են նշանակալի կերպով ազդել ինչպես տնտեսության, այնպես էլ Ընկերության գործունեության վրա: Շուկայական ռիսկը կապված է շուկայական գների տատանման հետ, ինչը ներառում է արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքի և կապիտալի գործիքների գների տատանումները, որոնք ազդում են Ընկերության եկամուտների կամ նրա ակտիվների վրա: Շուկայական ռիսկի գնահատման նպատակով Ընկերությունն իրականացնում է արժեթղթերի շուկայի և երկրի իրական հատվածի զարգացման միտումների վերաբերյալ մշտական վերլուծություն:

Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը կապված է շուկայական տոկոսադրույքների փոփոխության պատճառով ֆինանսական գործիքների արժեքի տատանումներից առաջացող կորուստների հետ: Ընկերությունը կառավարում է իր տոկոսադրույքի ռիսկը՝ պարբերաբար գնահատելով տոկոսադրույքի փոփոխությունից հնարավոր կորուստները:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը կապված է ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ ներգրավելու դժվարությունների հետ: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Քանի որ այս ռիսկը կարող է ազդել Ընկերության ֆինանսական վիճակի վրա, ուստի Ընկերությունն իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով փորձում է կանխատեսել ֆինանսական շուկայում հնարավոր դրամի առաջարկի պակասը և կառավարում է պարտավորությունները ըստ ժամկետայնության և ծավալների՝ ձգտելով հնարավորինս դիվերսիֆիկացնել և նվազեցնել այդ ռիսկը: Բացի այդ, Ընկերության պորտֆելի հիմնական մասը կազմում են բարձր

իրացվելի ակտիվներ, որը ենթադրում է վերջիններիս հեշտ իրացում՝ դրամական միջոցների ներգրավման հետ կապված դժվարությունների դեպքում:

Արտարժույթային ռիսկ: Այս ռիսկը կապված է արտարժույթի փոխարժեքի տատանումներից արտարժույթային բաց դիրքի վերագնահատումից առաջացած կորուստների հետ: Ընկերությունը արտարժույթի փոխարժեքի հնարավոր բացասական տատանումներից խուսափելու նպատակով սահմանափակում է արտարժույթային պարտավորությունների ժամկետայնությունը: Ընկերությունը կառավարում է արտարժույթային ռիսկը՝ պարբերաբար գնահատելով արտարժույթային դիրքից հնարավոր կորուստները:


Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկը ներքին գործընթացների, մարդկանց և համակարգերի գործունեության անհաջող ընթացքից կամ արտաքին գործոնների ազդեցությունից կորուստներ կրելու հավանականությունն է: Ընկերությունն իր ներքին իրավական ակտերով սահմանում է գործունեության իրականացման ընթացքում հնարավոր գործառնական ռիսկերի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ:

### **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են.

- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,
- իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
- իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում,
- արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման իրականացում,
- արժեթղթերի պահառություն,
- արժեթղթերի փաթեթի կառավարում,
- արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին,
- արտարժույթի դիլերային/բրոքերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացում:

Ստորև ներկայացված է Ընկերության գործունեության առանձին տեսակների մասնաբաժինը ընդհանուրի մեջ:



Ընկերության գործունեության հիմնական մաս կազմող դիլերային գործունեությունը, այն է՝ իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարումը, իրականացվել է 17,370,518,000 ՀՀ դրամ ծավալի (2008թ. վերջի դրությամբ): Ընդ որում, պետական արժեթղթերով դիլերային գործառնությունների ծավալը կազմել է 17,269,642,000 ՀՀ դրամ, իսկ կորպորատիվ արժեթղթերով դիլերային գործառնությունների ծավալը՝ 100,876,000 ՀՀ դրամ:


Ընկերության կողմից իրականացվող հիմնական ներդրումային ծառայություններից բրոքերային գործունեության (այն է՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը, իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը) ընդհանուր ծավալը կազմել է 546,500,000 ՀՀ դրամ (2008թ. վերջի դրությամբ), որից պետական արժեթղթերով բրոքերային գործառնությունների ծավալը կազմել է մոտ 392,000,000 ՀՀ դրամ, իսկ կորպորատիվ արժեթղթերով իրականացրած գործառնությունների ծավալը՝ 154,500,000 ՀՀ դրամ:

Ընկերությունն իր հաճախորդներին տրամադրում է արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվություն, որն իրականացվում է առայժմ անվճար՝ որպես լրացուցիչ ծառայություն:

Ընկերության կողմից իրականացվող մյուս հիմնական ծառայությունը արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխումն է: Այն 2008թ. իրականացվել է 250,000,000 ՀՀ դրամ ընդհանուր ծավալի (անվանական արժեքով):

Ընկերության ոչ հիմնական ներդրումային ծառայություններից են՝ արժեթղթերի պահառությունը, արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցումը, արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացումը, արժեթղթերով գործարքների հետ կապված ուսումնասիրությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմումը և տարածումը: 2008թ. վերջում Ընկերությանը պահառության

տրված արժեթղթերի ծավալը կազմել է 258,438,000 ՀՀ դրամ (անվանական արժեքով): Արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնություններն իրականացվել են որպես արժեթղթերի դիլերային գործունեության բաղկացուցիչ մաս: Ընդ որում, արտարժույթի դիլերային բորսայական առք ու վաճառքի գործառնությունների փաստացի ծավալը կազմել է 900,000 ԱՄՆ դոլար, իսկ արտարժույթի արտաբորսայական դիլերային առք ու վաճառքի գործառնությունների ծավալը՝ 630,000 ԱՄՆ դոլար և 4,350,000 ԱՄՆ դոլարի արժուրային սվոյ (2008թ. վերջի դրությամբ):



Աղյուսակ 1-ում ներկայացված է ներդրումային ընկերությունների կողմից արժեթղթերի շուկայում իրականացվող արտաբորսայական գործառնություններում Ընկերության մասնաբաժինը:

**Աղյուսակ 1. Ներդրումային ընկերությունների արտաբորսայական շրջանառության ծավալները (առանց ռեպո գործարքների)\***

	«ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ	Ընդհանուր	Տոկոսային մեծությունը ընդհանուրի մեջ
Բաժնային արժեթղթեր	14.2	12,494.3	0.11%
Ոչ բաժնային արժեթղթեր, այդ թվում՝			
Պետական	1,124.3	9,688.6	11.60%
Ոչ պետական	253.5	4,126.5	6.14%
<b>Ընդամենը</b>	<b>1,392.0</b>	<b>26,309.4</b>	<b>5.29%</b>

\* - Տվյալները ներկայացված են 2008թ. հուլիս-2009թ. հունվար ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 2-ում բերված են արժեթղթերի շուկայում պահառության վերցված արժեթղթերի ծավալները, ներդրումային ընկերությունների կողմից կնքված ռեպո/հակադարձ ռեպո համաձայնագրերը, ինչպես նաև Ընկերության մասնաբաժինը ընդհանուրի մեջ:

**Աղյուսակ 2. Պահառության վերցված արժեթղթեր, ներդրումային ընկերությունների կողմից կնքված ռեպո/հակադարձ ռեպո համաձայնագրեր**

մլն ՀՀ դրամ

	«ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ	Ընդհանուր	Տոկոսային մեծությունը ընդհանուրի մեջ
Պահառության վերցված արժեթղթեր*	354.7	6,223.3	5.7%
Ներդրումային ընկերությունների կողմից կնքված ռեպո/հակադարձ ռեպո համաձայնագրեր, այդ թվում՝	11,466.1	103,968.0	11.0%
երկարաձգված	3,615.0	49,581.7	7.3%


\* - Ներառված են նաև ներդրումային ծառայություններ մատուցող բանկերի ցուցանիշները:

Աղյուսակ 3-ում ներկայացված է Ընկերության կողմից իրականացված բորսայական գործարքների ծավալը:

**Աղյուսակ 3. Բորսայական գործարքների ծավալը (2008թ.)**

մլն ՀՀ դրամ

	«ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ	Ընդհանուր	Տոկոսային մեծությունը ընդհանուրի մեջ
Բաժնետոմսեր	31.7	262.1	12.09%
Պետական պարտատոմսեր	-	1,662.20	-
Կորպորատիվ պարտատոմսեր	12.9	2,221.60	0.58%



**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Հաշվապահական հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ (հազ. ՀՀ դրամ)**

Ցուցանիշի անվանումը	2006	2007	2008
Հիմնական միջոցներ	6 490	8 239	5 766
Ոչ նյութական ակտիվներ	511	416	616
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	1 583 754	1 520 324	1 475 998
Նյութեր	156	203	304
Տրված ընթացիկ կանխավճարներ	519	582	522
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	42	23 407	979
Այլ դեբիտորական պարտքեր	40 545	40 545	40 545
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	1 219 596	811 489	501 847
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22 901	32 038	3 888
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>2 874 514</b>	<b>2 437 243</b>	<b>2 030 465</b>
Սեփական կապիտալ	784 144	761 977	651 897
Կարճաժամկետ բանկային վարկեր	894 184	373 642	346 839
Կարճաժամկետ փոխառություններ	1 191 960	1 301 315	1 029 096
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	419	309	618
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	3 326		2 015
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	481		
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>	<b>2 874 514</b>	<b>2 437 243</b>	<b>2 030 465</b>

**Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (հազ. ՀՀ դրամ)**

Ցուցանիշի անվանումը	2006	2007	2008
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	2 131 332	2 281 756	2 155 614
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(2 007 948)	(2 245 477)	(2 070 713)
Համախառն շահույթ (վնաս)	123 384	36 279	84 901
Իրացման ծախսեր			
Վարչական ծախսեր	(48 348)	(61 003)	(79 454)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	75 036	( 24 724)	5 447
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում`	2 945 771	1 829 680	293 678
Արտարժույթային գործառնություններից	2 945 647	1 829 282	292 498
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում`	(2 996 769)	(1 867 331)	(361 015)
Արտարժույթային գործառնություններից	(2 949 159)	(1 829 132)	(292 225)
Գործառնական շահույթ (վնաս)	24 038	(62 375)	(61 890)
Ֆինանսական ծախսեր	(67 081)	(87 177)	(53 653)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)			
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)			

Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	483 413	462 348	193 670
<b>Ֆինանսական ներդրումներից</b>	<b>276 421</b>	<b>236 593</b>	<b>200 741</b>
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	440 370	312 796	78 127
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)			
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	440 370	312 796	78 127
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(49 908)	(15 769)	(18 207)
<b>Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո</b>	<b>390 462</b>	<b>297 027</b>	<b>59 920</b>

**Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ըստ գործունեության տեսակների (հազ. ՀՀ դրամ)**

Ցուցանիշի անվանումը	2006	2007	2008
<b>Սովորական գործունեությունից հասույթ</b>			
Բրոքերային գործունեությունից ստացված (ստացվելիք) միջնորդավճարներից հասույթ	48	187	276
Դիվերսիվ գործունեությունից ստացված հասույթ	1 719 760	2 281 756	2 155 614
Արժեթղթերի պահառության գործունեությունից ստացված (ստացվելիք) վճարներից հասույթ	8	58	41
Այլ ծառայություններից ստացված հասույթ, այդ թվում.	411 572		
Արժեթղթերում ներդրումների գծով հաշվեգրված եկամուտներ, այդ թվում.	276 420	236 593	200 741
- պետական արժեթղթերում ներդրումներից	270 033	236 518	181 401
- բաժնային արժեթղթերում ներդրումներից			2 025
- ոչ պետական այլ արժեթղթերում ներդրումներից	6 387	75	17 315
Արտարժույթային գործառնությունների և արտարժույթի փոխարժեքային տարբերության գծով հաշվեգրված եկամուտներ, այդ թվում՝	3 291 635	2 240 104	457 873
- արտարժույթի առավանձառքի գործունեության գծով	2 945 647	1 829 282	292 498
- արտարժույթի փոխարժեքային տարբերության գծով	345 988	410 822	165 375
Սովորական գործունեությունից այլ հասույթ	66	166	862
<b>Սովորական գործունեության ծախսեր</b>	<b>( 5 259 085)</b>	<b>(4 446 068)</b>	<b>(2 737 280)</b>
<b>Ընդամենը</b>	<b>440 424</b>	<b>312 796</b>	<b>78 127</b>


**Ֆինանսական գործակիցներ**

Ցուցանիշի անվանումը	2006	2007	2008
<b>Մեփական կապիտալի շահութաբերություն</b> (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/ Մեփական կապիտալի միջին մեծություն)	54.24%	38.42%	8.48%
<b>Ակտիվների շահութաբերություն</b> (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/ Ընդհանուր ակտիվների միջին մեծություն)	13.50%	11.18%	2.68%
<b>Զուտ շահույթի մարժա</b> (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/ Հասույթ)	18.32%	13.02%	2.78%
<b>Ակտիվների օգտագործման գործակից</b> (Հասույթ/ Ընդհանուր ակտիվների միջին մեծություն)	73.67%	85.91%	96.50%
<b>Մեփական կապիտալի մուտքի արտադրողականություն</b> (Ընդհանուր ակտիվների միջին մեծություն/ Մեփական կապիտալի միջին մեծություն)	4.02	3.44	3.16
<b>Կապիտալի համարժեքության գործակից</b> (Մեփական կապիտալ/ Ընդհանուր ակտիվներ)	27.28%	31.26%	32.11%
<b>Ֆինանսական կախվածության գործակից</b> (Ընդհանուր պարտավորություններ/ Մեփական կապիտալ)	2.67	2.20	2.11
<b>Ընդհանուր իրացվելիության գործակից</b> (Ընթացիկ ակտիվներ/Ընթացիկ պարտավորություններ)	61.41%	54.22%	39.76%

Ֆինանսական ցուցանիշների նվազումը բացատրվում է Ընկերության արժեթղթերի պորտֆելի ծավալի կրճատմամբ: Ընկերության կողմից վերջինիս ծավալի ավելացման հետաձգումը պայմանավորված է պարտատոմսերի եկամտաբերության փոփոխության սպասումներով, ինչպես նաև Ընկերության արդյունավետ գործունեության համար ֆինանսական շուկայում ձևավորված անբարենպաստ պայմանների առկայությամբ:

### **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ընկերության կանոնադրությամբ սահմանված Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը: Ընկերության կառավարմանը մասնակցող անձինք են՝ Գոռ Առաքելյանը (տնօրեն), Վարուժան Շահումյանը (գլխավոր հաշվապահ) և Հերմինե Այդինյանը (ներքին վերահսկողության և աուդիտի ծառայության ղեկավար):  
Հաջորդ էջում ներկայացված է Ընկերության կազմակերպական կառուցվածքը.



## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ակնկալվում է, որ NASDAQ OMX ընկերության մուտքը Հայաստանի արժեթղթերի շուկա, մի շարք ընկերությունների կողմից իրականացված կորպորատիվ պարտատոմսերի թողարկումները, ինչպես նաև բաժնետոմսերի շուկայում թողարկումների քանակի ակնկալվող աճը բարենպաստ պայմաններ կստեղծեն տեղական և օտարերկրյա ներդրողների վստահության բարձրացման, ինչպես նաև արժեթղթերի շուկայում գործառնությունների աշխուժացման համար, ինչը Ընկերության գործունեության վրա դրական ազդեցություն կթողնի:

Ընկերության հետագա զարգացման համար հնարավորությունների շարքին կարելի է դասել.

- NASDAQ OMX ընկերության կողմից Հայաստանի ֆոնդային բորսայի և կենտրոնական դեպոզիտարիայի ձեռքբերումը: NASDAQ OMX-ը, 2008թ. փետրվարից հանդիսանալով Հայաստանի ֆոնդային բորսայի և կենտրոնական դեպոզիտարիայի 100% սեփականատերը, ստեղծեց նոր բորսայական հարթակներ կորպորատիվ արժեթղթերով ռեպո գործարքների, ինչպես նաև հասցեական գործարքների իրականացման համար, փոփոխություններ կատարեց ֆոնդային բորսայի և կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության կանոններում՝ համապատասխանեցնելով դրանք այն կանոնների հետ, որոնք գոյություն ունեն NASDAQ OMX-ի այլ հարթակների դեպոզիտարիաներում և բորսաներում:
- ֆոնդային բորսայում ցուցակման գործընթացը խրախուսելու նպատակով օրենսդրական փոփոխությունների ընդունումը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն է տվել «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներում լրացումներ կատարելու մասին փաթեթին, որի համաձայն խրախուսվելու է Հայաստանում գործող ֆոնդային բորսայում ընկերությունների կողմից թողարկված բաժնետոմսերի ցուցակման գործընթացը: Մանսավորապես, փոփոխություններով նախատեսվում է փոխհատուցել ցուցակման նպատակով ստացված ծառայությունները մատուցողներին վճարված ավելացված արժեքի հարկի գումարները, ինչպես նաև մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը Հայաստանի ֆոնդային բորսայում բաժնետոմսեր ցուցակած ռեզիդենտներին հնարավորություն ընձեռել ցուցակման տարին ներառող երեք հաշվետու տարիների շահութահարկի գումարը նվազեցնելու 50 տոկոսով, բայց ոչ ավել, քան յուրաքանչյուր տարվա համար 300 մլն դրամով:
- պարտադիր ապահովագրության, կենսաթոշակային հիմնադրամի, ներդրումային ֆոնդերի վերաբերյալ օրենսդրական դաշտում ակնկալվող փոփոխությունները, ինչպես նաև «Կորպորատիվ կառավարման» օրենսգրքի մշակումը:

Այս ամենը հիմք են տալիս ենթադրել, որ 2009թ. նպաստավոր պայմաններ կստեղծվեն Հայաստանի կապիտալի շուկայի զարգացման համար:

Հաշվի առնելով ֆինանսական շուկայի զարգացման արդի միտումները՝ կորպորատիվ արժեթղթերի թողարկումների շուկան դառնում է բավականին գրավիչ և խոստումնալից, որը մեծ նախադրյալներ է ստեղծում ներդրումային շուկայի աշխուժացման համար, ինչն իր հերթին բարենպաստ ազդեցություն կունենա Ընկերության գործունեության վրա:

Առաջիկա տարիների ընթացքում իր գործունեությունն ընդլայնելու նպատակով Ընկերությունը պատրաստվում է մեծացնել կապիտալիզացիան՝ լրացուցիչ ֆինանսական միջոցներ համալրելու միջոցով: Դա նախատեսվում է իրականացնել՝ բաժնետիրական ընկերության վերակազմավորմամբ:

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքներն ու զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

26 մարտի 2009թ.

Գոռ Առաքելյան

Տնօրեն

Վարուժան Շահումյան

Գլխավոր հաշվապահ

Հերմինե Այդինյան

Ներքին վերահսկողության և աուդիտի  
ծառայության ղեկավար





## Աուդիտորական Եզրակացություն

Մենք ստուգել ենք «ՏՈՆՏՈՆ» Ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2008 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարման կարգը:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ճշգրիտ հաշվապահական հաշվառման համակարգ պահելու և յուրաքանչյուր տարվա ֆինանսական հաշվետվությունները նախապատրաստելու համար:

Մեր պատասխանատվությունն է կատարված աուդիտի հիման վրա այդ հաշվետվությունների վերաբերյալ արտահայտել անկախ կարծիք և այդ տեղեկատվությունը ներկայացնել Ձեզ: Աուդիտն իրականացվել է համընդհանուր աուդիտորական ստանդարտների համաձայն: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք այնպես պլանավորենք և կատարենք մեր աուդիտը հիմնավոր կերպով համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվություններում չկան էական խախտումներ, որոնք առաջացել են կեղծիքի կամ այլ սխալների հետևանքով: Ֆինանսական ինֆորմացիայի ստուգումը նշանակում է հաշվետվության պատրաստման համալիր ընկալման հասնելը, ֆինանսական տվյալների վերլուծությունը, ինչպես նաև ներառում է ֆինանսական և հաշվապահական աշխատանքների պատասխանատուների հարցումը: Աուդիտն իր մեջ ընդգրկում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների գումարները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների տեղեկատվության բացահայտումները: Աուդիտը նաև ներառում է հաշվապահական սկզբունքների գնահատումը, ղեկավարության կողմից կատարվող գնահատումները և ֆինանսական հաշվետվության ներկայացման գնահատումը: Մենք վստահ ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը բավարար հիմք է մեր կարծիքի ձևավորման համար:

### Եզրակացություն

Մեր կարծիքով Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ճշմարտացիորեն են արտացոլում ընկերության ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները 2008թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ:


25 Մարտի 2009թ.



Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության  
12.12.2001թ. թիվ 465 կրամանով տարեկան (ամբողջական  
փարսեթի միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ  
սահմանված կազմակերպությունների վրա

ՉԼՆ 1



**ՀԱՐՑԱԿԵՐՄԱՆ ՀԱՐՑԱԿԵՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

31 դեկտեմբերի 2008  
(ամսաթիվ, ամիս, տարի)

Գրու Մուսրեյան  
անուն ազգանուն  
Վարդանան Շահումյան  
անուն ազգանուն



Գլխավոր  
Գլխավոր հաշվապահ

Եզրագրվածության անվանումը	«ՏՈՒՏՈՒ» ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	Ցածկագիրը	110
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	Ներդրումային գործունեություն Ներդրումային գործունեություն		
Պետական ռեգիստրում գրանցման համարը			7
Հարկ վճարողի հաշվառման համարը			00841696
Չափի միավորը			հազ. դրամ
Գտնվելու վայրը	ք. Երևան, Դեղատուն 2	Խեղաթուղ	58-02-62
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ք. Երևան, Դեղատուն 2	Խեղաթուղ	58-02-62



Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության  
12.12.2001թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական  
փաթեթով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ  
սահմանված կազմակերպությունների վրա



Ձև N 2

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01.01.2008թ.-31.12.2008թ.  
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

		ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	<u>«ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն</u>	110
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	<u>Ներդրումային գործունեություն</u> <u>Ներդրումային գործունեություն</u>	
Պետական ռեգիստրում գրանցման համարը		7
Հարկ վճարողի հաշվառման համարը		00841696
Չափի միավորը		հազ. դրամ
Գտնվելու վայրը	<u>ք. Երևան, Դեղատան 2</u>	հեռախոսը 58-02-62
Փաստացի գործունեության իրականացման վայրը	<u>ք. Երևան, Դեղատան 2</u>	հեռախոսը 58-02-62

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան
1	2	3	4	5	6
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	2 281 756	2 155 614	879 433	565 034
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	( 2 245 477 )	( 2 070 713 )	( 870 535 )	( 562 638 )
Համախառն շահույթ (վնաս)	030	36 279	84 901	8 898	2 396
Իրացման ծախսեր	040	( )	( )	( )	( )
Վարչական ծախսեր	050	( 61 003 )	( 79 454 )	( 23 990 )	( 20 141 )
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	( 24 724 )	5 447	( 15 092 )	( 17 745 )
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	1 829 680	293 678	297 996	91 412
Արտարժուրային գործառնություններից	071	1 829 282	292 498	297 775	91 200
	072				
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	( 1 867 331 )	( 361 015 )	( 309 958 )	( 107 470 )
Արտարժուրային գործառնություններից	081	( 1 829 132 )	( 292 225 )	( 298 229 )	( 90 960 )
	082				
Գործառնական շահույթ (վնաս)	090	( 62 375 )	( 61 890 )	( 27 054 )	( 33 803 )
Ֆինանսական ծախսեր	100	( 87 177 )	( 53 653 )	( 17 500 )	( 14 363 )
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	110				
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	120				
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	462 348	193 670	175 410	27 219
Ֆինանսական ներդրումներից	131	236 593	200 741	80 883	43 540
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	312 796	78 127	130 856	( 20 947 )
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	150				
Չուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	312 796	78 127	130 856	( 20 947 )
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	( 15 769 )	( 18 207 )	( 15 769 )	795
Չուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	297 027	59 920	115 087	( 20 152 )
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)*	190				
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)*	200				

\* Սույն հոդվածների լրացումը պարտադիր է այն բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են, կամ որոնք գտնվում են արժեթղթերի բաց (կանոնակարգվող) շուկայում սովորական բաժնետոմսեր կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսեր թողարկելու գործընթացում: Սույն հոդվածների գումարը ցույց է տրվում դրամներով (ոչ թե հազար դրամներով):



Վավար  
  
 Գլխավոր հաշվապահ  



Գրո Առաքելյան  
 անուն ազգանուն

Վարդան Շահումյան  
 անուն ազգանուն

Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության  
12.12.2003թ. թիվ 465 կրթական տարեկան (ամբողջական  
փարիքով միջանկյալ) հաշվապետական մեթոդաբանության համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ  
սահմանված կազմակերպությունների վրա

ՉՆ Ռ Յ



**ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՍԱԼՈՒՄ ԳՐԱՊԻՍՏԱԼՈՒՄ ԿԱՐԳԱՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

01.01.2008թ. - 31.12.2008թ.  
(հաշվառու տարին (ժամանակաշրջանը))

Գործարարական  
անուն ազգանուն  
Վարդուհան Շահուրյան  
անուն ազգանուն  
Գլխավոր հաշվապահ  
Գլխավոր

Ցածկագիրը

Կազմակերպության անվանումը	«ՏՆՆ-ՏՆՆ» ինվեստիցիոն սահմանափակ կառավարման ընկերություն	Ցածկագիրը	110
Փաստաթղթի գործունեության կիսնական երկու տեսակները	Ներդրումային գործունեություն Ներդրումային գործունեություն		
Պետական ռեզիստրում գրանցման համարը			7
Հարկ վճարողի հաշվառման համարը			00841696
Չափի միավորը	հազ. մլրամ		
Գտնվելու վայրը	ք. Երևան, Գեղատան 2	հեռախոսը	58-02-62
Փաստաթղթի գործունեության իրականացման վայրը	ք. Երևան, Գեղատան 2	հեռախոսը	58-02-62

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	I. Նախորդ տարի (ժամանակաշրջան)												
	տող	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ				Էմիսիոն եկամուտ (վնաս)	Վերագնահատումի ց տարբերություններ	Վերաչափումից տարբերություններ	Կուտակված շահույթ (վնաս)	Պահուստային կապիտալ	Միջանկյալ շահաբաժիններ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
		Կանոնադրական կապիտալ	Չվճարված կապիտալ	Հետ գնված կապիտալ	Չուտ գումարը								
Հորվածներ	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2006թ.	010	353 000			353 000				390 462	40 682			784 144
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	020												
Վերահաշվարկված մնացորդը	030	353 000			353 000				390 462	40 682			784 144
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր	040												
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	050	59 000			59 000								59 000
	051												
	052												
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) գուտ շահույթ (վնաս)	060								297 027				297 027
Շահաբաժիններ	070								( 378 194 )	( )			( 378 194 )
Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	080												
	081												
Ներքին շարժեր, այդ թվում՝	090						( )		( 12 268 )	12 268			
	091						( )						
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007թ.	100	412 000			412 000				297 027	52 950			761 977

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	II. Հաշվետու տարի (ժամանակաշրջան)												
	տող	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ				Էմիսիոն եկամուտ (վնաս)	Վերագնահատումի ց տարբերություններ	Վերաչափումից տարբերություններ	Կուտակված շահույթ (վնաս)	Պահուստային կապիտալ	Միջանկյալ շահաբաժիններ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
		Կանոնադրական կապիտալ	Չվճարված կապիտալ	Հետ գնված կապիտալ	Չուտ գումարը								
Հորվածներ	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007թ.	010	412 000			412 000				297 027	52 950			761 977
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	020												
Վերահաշվարկված մնացորդը	030	412 000			412 000				297 027	52 950			761 977
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր	040												
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	050												
	051												
	052												
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) գուտ շահույթ (վնաս)	060								59 920				59 920
Շահաբաժիններ	070								( 170 000 )	( )			( 170 000 )
Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	080												
	081												
Ներքին շարժեր, այդ թվում՝	090						( )		( 8 850 )	8 850			
	091						( )						
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008թ.	100	412 000			412 000				178 097	61 800			651 897

Հաստատված է ՀՀ ֆինանսների և երեմոնիայի նախարարության  
12.12.2008թ. թիվ 465 կրկնակի տարեկան (ամբողջական  
փարսերով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ  
սահմանված կազմակերպությունների վրա

Ձև N 4



**ՀԱՅԿՈՒՄԲԱՆԿԱՆ ՍՏՊՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՍՄՄԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

01.01.2008թ. -31.12.2008թ.  
(հաշվետու տարին (մասնակաշրջանը))



Գործառնական  
անուն ազգանուն

Վարչության Շահումյան  
անուն ազգանուն

Ներկայումս  
Գլխավոր հաշվապահ

Կազմակերպության անվանումը	«ՏՈՆՏՈՆ» Ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	Ցածկազիտը	110
Փաստացի գործունեության կիմնական երկու տեսակները	Ներդրումային գործունեություն Ներդրումային գործունեություն		
Պետական ղեկավարում գրանցման համարը			7
Հարկ վճարողի հաշվառման համարը			00841696
Շահի միավորը			հազ. դրամ
Գտնվելու վայրը	ք. Երևան, Դեպատան 2	Խնայված	58-02-62
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ք. Երևան, Դեպատան 2	Խնայված	58-02-62

Ֆուցանիշի անվանումը	տող	Նախորդ ժամանակաշրջան						Հաշվետու ժամանակաշրջան					
		Գումար	այդ թվում				Գ.ՄՀ*	Գումար	այդ թվում				Գ.ՄՀ*
			դրամարկը		բանկային հաշիվներ				դրամարկը		բանկային հաշիվներ		
			դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ			դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	
1	2	3	4	5	6	7	8	3	4	5	6	7	8
Գրանական միջոցների տարեկան մնացորդը	010	22 901	224		22 140	537		32 038	1 454		30 549	35	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր													
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	2 283 067	21 764		2 261 303			2 166 774	66 353		2 100 421		
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝	030	4 252 678	64 745		1 871 586	2 316 347		2 388 994	87 375		797 052	1 504 567	
Արտարժույթային գործառնություններից	031	3 978 723			1 662 377	2 316 346		1 797 064			292 497	1 504 567	
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	040	6 535 745	86 509		4 132 889	2 316 347		4 555 768	153 728		2 897 473	1 504 567	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր													
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով	050	1 495 733	26 144		1 469 589			1 595 721	7 279		1 588 442		
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	060	12 563	1 337		11 226			16 550	931		15 619		
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	070	41 095	2 259		38 836			45 062	1 041		44 021		
Վճարումներ բյուջե	080	42 229			42 229			8			8		
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	090	3 477			3 477			4 692			4 692		
Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	100	4 766 876	64 703		2 551 255	2 150 918		3 561 412	87 339		2 007 204	1 466 869	
Արտարժույթային գործառնություններից	101	4 232 777	64 703		2 339 950	1 828 124		1 796 390			1 504 166	292 224	
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	110	6 361 973	94 443		4 116 612	2 150 918		5 223 445	96 590		3 659 986	1 466 869	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	120	173 772	( 7 934)		16 277	165 429		( 667 677)	57 138		( 762 513)	37 698	
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր													
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	130												
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից	140	12 313	12 313					258 774	2 750		256 024		
Շահաբաժինների և տոկոսների ստացումից	150							301			301		
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում՝	160												
	161												
